և երկոքին ազգքս առաջի օտարաց առակ նշանակի. և ո՞վ արդեօք լինէր պարտաւոր արեանց անմեղաց. վասն որոյ երկուցեալ յառաջակայ վտանգէ և 'ի տկարութենէ իմ-մէ՝ և յայլ իրաց, գրեցի զգիրս աղերսանաց ազատել զիս 'ի գործոյ աստի՝ զի չեմ բաւական, կամ ուն տեղւոյս՝ ոչ է ըստ կամաց տեղւոյդ, թէեւ ազգի նախանձ՝ այլ ես խոստովանիմ զտկարութիւն իմ յայդմ։

Եւ եթէ ընդ իս ցասուցեալ էք վասն հաշտութեանս՝ զոր արարի ընդ Ցոյնս, այս էր պայման հաշտութեան մերոյ. երկոքին ազգքս երդուաք 'ի Ս. Աւետարանն, չ'յիշել զանցեալն, և չյարուցանել զվէճս 'ի ներկայն, զի եթէ դուք զայդ ոչ կամիք՝ դուք գիտէք, այլ կալարուք զիս հրաժարեալ. նախ առաքեցէք զոք 'ի տեղի իմ, եւ ապա զկամն արարէք։ Գոհանամ զԱստուծոյ՝ զի ոչ ինչ իմիք կարօտիք յօրհնեալ երկրիս յայսմիկ, զի ամենեքեան ցանկան տեղեաց ձերոց, զառաւելն կամով և ատելութեամբ զի՞նչ ունիք առնել՝ ոչ վասն ազգացն ասեմ, այլ նոր վիճից վասն տեղեաց, զի եթէ նոքա ուխտազանց գտեալ զայլ ինն չարիս մտաբերիցեն վասն Ս. Աթոռոյս և սեփհական տեղեաց մերոց, յերես անկեալ աղաչեմ, արթուն լինել և կալ արիութեամբ, վառիլ 'ի սէր և 'ի նախանձ ազգային, և Տէր լիցի ձեզ օգնական. այլ որքան հնար է զխաղաղութեան զհետ երթայք. զի մեք այլ եմք՝ և նոքա այլ, մեք տկար՝ ժամանակն չար՝ երկիրս անտէրունչ՝ ամենայն ոք ինքնագլուխ՝ միտք և դիտաւորութիւնք երկրիս 'ի վերայ երից վանաց՝ զոր Տէր փրկեսցէ. գրեալ յ7 Նոյեմբեր ամսոյ։